ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 4. ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

1 Նեղոսի ծանծաղուտներում առատորեն աճում էր ***պապիրուս*** կոչվող եղեգը: Եգիպտացիները դրա ցողունը բարակ շերտերով կտրում էին, խսիրի ձևով հյուսում, թրջում, տափակեցնում և ստանում հաստ ստվարաթղթի նման թուղթ:

2 Այն լեզուն, որով խոսել և գրել են հին եգիպտացիները, հետագայում մոռացվել է: Ոչ ոք չէր կարողանում կարդալ եգիպտական գրությունները: Թվում էր, թե հիերոգլիֆների ընթերցման գաղտնիքն ընդմիշտ մոռացության է տրված:



19-րդ դ. սկզբներին Եվրոպա բերվեց եգիպտական Ռոզեթ քաղաքում գտնված մի քար: Այդ քարի վրա եգիպտերեն և հունարեն փորագրված էին արձանագրություններ: Արձանագրության մեջ թագավորի անունն առնված էր շրջանակի մեջ: Ֆրանսիացի երիտասարդ գիտնական ***Շամպոլիոնը***, որը գիտեր հունարեն և այլ հին լեզուներ, ենթադրեց, որ թագավորի անվան մեջ յուրաքանչյուր հիերոգլիֆ առանձին տառ է, սակայն որոշ ձայնավորներ բաց են թողնված: Համադրելով երկու տարբեր լեզուներով գրված արձանագրությունները, Շամպոլիոնը կարողացավ գուշակել մի քանի հիերոգլիֆների իմաստը: Այդ աշխատանքում նրան օգնեց մի այլ քարի հայտնագործումը, որի վրա փորագրված էր նրան հայտնի Կլեոպատրա թագուհու անունը: Օգտվելով վերծանված հիերոգլիֆներից՝ Շամպոլիոնը կարդաց Պտղոմեոս փարավոնի անունը: Եգիպտական գրի ընթերցման սկիզբը դրվեց:

Շամպոլիոնի աշխատանքը շարունակեցին այլ գիտնականներ: Հին եգիպտական գրության գաղտնիքը բացվեց: Այժմ գտել և ընթերցել են վիթխարի քանակությամբ պապիրուսներ և քարի վրայի փորագիր արձանագրություններ:

3

«Ճշմարտության և ստի մասին» հեքիաթում պատմվում է, թե ինչպես 2 եղբայրներից մեկի կինը փորձում է գայթակղել ամուսնու երիտասարդ եղբորը և, չհաջողելով, նրան է մեղադրում այդ ամենում: Անմեղ երիտասարդը շատ չարչարանքներ է կրում, բայց կախարդական ուժերը նրան փրկում են մահից: Ի վերջո ճշմարտությունը բացահայտվում է, և սուտը արժանի պատիժ է ստանում:

«Ունու-Ամոնի ճանապարհորդությունը» պատմում է, թե ինչ արկածների և դժվարությունների է հանդիպել Ամոնի տաճարի այդ քուրմը, որին ուղարկել էին Փյունիկիա՝ տաճարի համար մայրի ծառի գերաններ գնելու:

«Իպուսերի ասույթները» խրատական պատմություն է Միջին թագավորության ժամանակաշրջանում տեղի ունեցած չքավորների և ստրուկների ապստամբության մասին: Հեղինակը, լինելով դեպքերի ականատեսը, ցավով նշում է, որ «երեկվա ստրուկը այժմ ինքն է ստրուկների տեր դարձել, իսկ նա, ով առաջ ոտնաման չուներ, հիմա հարստության տեր է»:

Խրատական պատմվածքի մեկ այլ օրինակ է ***«Ախթոյի խրատնե-***

ը» պատմությունը, որի հեղինակն ինքը փարավոնն է, որը խրատներ ու խորհուրդներ է տալիս իր որդուն, թե ինչպես պետք է կառավարել պետությունը, աստիճանավորներից ում խորհուրդներին կարելի է վստահել և ինչպես է պետք վարվել անհնազանդների հետ:

4

Ըստ ավանդության՝ նրա եղբայրը՝ անապատի աստված Սեթը, խորամանկությամբ սպանում է Օսիրիսին և թաքցնում նրա մարմինը: Սակայն Օսիրիսի կինը՝ Իսիդան, գտնում է ամուսնու մարմինը և իր սիրո ուժով վերակենդանացնում նրան: Նրանց որդի Հորը հաղթում է Սեթին և վերականգնում Օսիրիսի իշխանությունը: Եգիպտական փարավոնները համարվում էին Հոր աստծո մարմնացումը երկրի վրա:

Օսիրիսը հարություն է առնում և դառնում հետմահու կյանքի աստվածը: Համարում էին, որ մեռած մարդկանց հոգիները ներկայանում են Օսիրիսի դատաստանին: Իր դատարանում Օսիրիսը նստում էր թագավորական գահի վրա, գլխին թագը, ձեռքին գավազան ու մտրակ՝ որպես արքայական իշխանության նշաններ: Օսիրիսը կշռում էր մահացածների սիրտը և անմեղներին ուղարկում է հետմահու ապրելու ***Երանության դաշտերում***, իսկ մեղավորներին՝ տառապելու ստորերկրյա թագավորությունում:

5



6

Եգիպտոսում տաճարներն ունեին հսկայական հարստություն՝ միայն Թեբե քաղաքի գլխավոր տաճարին էր պատկանում ավելի քան 80 հազար ստրուկ: Թեբե քաղաքի Ամոն աստծո տաճարի սյունաշարը բաղկացած է 134 խոշոր սյուներից: Սյուներից մեծ մասի բարձրությունը հասնում է 21 մ-ի: Այդպիսի սյուների գլխին կարող էր տեղավորվել 100 մարդ:



Աբու Սիմբել տաճարի մուտքը և ներքին սրահը

Կառնակի տաճարի ներքին բակը

Լուքսոր տաճարի սյունաշարը

Կառնակ տաճարի սյունաշարը

Սյուների տեսակներ

Եգիպտական տաճարի ներքին տեսքը

Հաթշեփսութ թագուհին

Հաթշեփսութի դամբարան-տաճարը, Դեյր էլ Բահրիում

Թզի բերքահավաք

Հանգուցյալին երկրպագումը



Երաժիշտներ

Արքայադուստրերի առավոտյան արդուզարդը

Թութանամոնի սարկոֆագը

Նեֆերտիտի թագուհու անավարտ դիմաքանդակը

Թափառական երաժիշտ

Վարուցանք